

691

ԵՂԻՇԷ ԶԱՐԵՆՑ

ԲՈՒՐԻՆ, ԲՈՒՐԻՆ, ԲՈՒՐԻՆ

ԵՐԵՔ ՌԱԴԻՕՊՐԵՍ

19692



33923

19692

ՆԱԻՐԻ ԵՐԿՐԻՑ

Եկել—երկաթէ Երգ եմ ձեզ ասում
ես—կարմիր պոէտ—Եղիշէ Չարենց,
Ես եմ նախքի մի հսկա պոէտ—
եկել եմ ահա դարերի հեռու
ու հին մշուշից—
մշուշի միջից անթիւ դարերի.
եկել եմ ահա ու կանգնել եմ, սէզ,
և երգ եմ ասում հիմա բոլորիդ—
երկաթէ մի երգ:

Ոտքերս, ամուր, հողի մէջ մխած,
դուխտ աստղերում,
անասան, հաստատ կանգնած հողմային
օրերի հրում—
իմ յաւերժատես, պայծառ աչքերով
նայում եմ հեռուն:

Դէմս—հողմակոծ աշխարհն է անծայր,
հեռու ու հեռու,
շաչում է, զնգում, ահեղ ու պայծառ—,
բոսոր հողմերում:

Դիտիս վրայով

Թռչում են, շաչում օրերը արագ,
հողմերի նման յաւիտենութեան

Ժեծում են կուրծքս վիթխարի թափով,—
ծեծում են կուրծքս, շաչում ու իրենց
երկաթ թևերով թռչում են հեռու—
ու հեռուններում ոռնում են անտես

խորերի նման քաղցած գալերի,
որ գաղազել ու շշմել են ասես
հողմերում հրի:

Ու կանգնել եմ ես՝
ոտքերս ամո ր հողի մէջ մխած
ու գլուխս տօթ խառնարաններում
անցած ու գալիք ու նոր օրերի:

Ու կանգնել եմ ես
լեռների վրայ իմ աւեր երկրի,
կանգնել եմ հաստատ ու երգ եմ ասում
խնդասիրտ, արի,
և նետում եմ իմ երգը հողմաձայն
ժողովուրդներին բոլոր կողմերի—
բոլոր կողմերում տառապող մարդո՛ւն:
Եւ ասում եմ ես.

— եկել եմ ահա,
եկել, հասել եմ դարերի մութից,
անբոց մշուշից հեռու դարերի—
և բերել եմ ձեզ, կարմիր ձեր երթին,
սիրտը Նաիրի...

Բերել եմ կարմիր սիրտը Նաիրի
ձեր կարմիր հրին—կարմիր ողջս կ'զ
և ասում եմ ես

ժողովուրդներին բոլոր կողմերի,
բոլոր կողմերում տառապող մարդուն,
—լսէք, հէյ, լսէք,—

բոլոր կողմերում տառապող մարդիկ,
բանւորներ արի—բոլոր կողմերի,
և գիւղացիներ, զինւորներ բոլոր
ռազմադաշտերից տուն դարձող արդէն.

լսէք, հէյ, լսէք
դուք, որ յաղթակամ

եկել էք արդէն ու կուով ըմբոստ,
շաշող, շառաշող օրերի միջով
գնում էք դէպի կարմիր Ապագան—
լսէք, հէյ, լսէք, իմ ողջոյնը սէգ
ու եղբայրական...

Նաիրի երկրից—իմ ողջոյնը ձեզ,
ձեր կարմիր հրին—Նաիրի կարմիր
սիրտը—ողջակէզ:

Ո՛վ գիտէ արդեօք՝
բերել է մէկը այսօր աշխարհում
խառնելու ձեր մեծ ու հզօր երգին
մի երէ—աւելի՛ ըմբոստ ու արի,
քան իմ երգը այս—երգը Նաիրի...

Ո՛վ գիտէ արդեօք՝
բերել է մէկը այսօր աշխարհում
խառնելու հզօր, բոսոր ձեր սրտին
մի սիրտ—աւելի՛ ըմբոստ ու արի,
քան իմ սիրտը մեծ—սիրտը Նաիրի:

Եւ ո՛վ, ո՛վ կասի՝
նետե՛լ է արդեօք մէկը աշխարհում
այսօրւայ կարմիր, կարմիր ձեր երթին
մի ողջոյն—այնքան առնական, արի,
քան ողջոյնը քո, երկիր արնաքամ,
կարմիր Նաիրի...

Ծաղկի պէս կարմիր, հրասիրտ, զւարթ,
բացել է այսօր սիրտս նաիրեան
աշխարհի սրտում—
թէժ, կարմիր սրտում վառող աշխարհի:
Իմ հազար անգամ ու հազար սրով

արնոտած, խոցւած սիրտը նախրեան
բացւել է այսօր աշխարհի սրտում.
յուզում է հողիս անհուն մի խնդում,
խնդում մի հրէ—
և երգում եմ ես, անեղ ու պայծառ,
քո էն երգը մեծ, տիեզերական,
երկիր նախրի...
Երգում եմ հիմա քո երգը էն մեծ,
որ արտիս տւեց տառապանքը քո,
քո աշխատունակ, յաղթ ժողովրդի
տառապանքը մեծ:

Ես—ե՛ս եմ նորից—
դարերից եկած անհուն մի պօչտ—
Եղիշէ Չարենց—
Նախրի երկիր, քո երգիչը վառ,
օրհնեցուն պայծառ
ու զաւակը մեծ...

Ես—ե՛ս եմ նորից.
ոսկի երակը հնամեայ ցեղիս,
իմ ջլաբազուկ, յաղթ ժողովրդի
օղակը վերջին,
տւել եմ սիրտս գալիք օրերի
երկաթէ երգին,
կապել եմ կեանքս Գալիքի հետ վառ—
և կրում եմ իմ մեծ, հսկա սրտում
մի երկաթակուռ, նոր, հզօր աշխարհ:

Ու կանգնել եմ ես, հզօր ու հաստատ,
լեռների վրայ քո յաւերժածին—
կանգնել եմ, պայծառ, ու շուրջս հիմա
Գալիքի կարմիր թևերն են շաչում—
և կարծրանում ու պնդւում է հողիս

Նրանց շառաչում:

Ու հպարտ եմ ես, հպարտ է ու խենթ
քո կարմիր չրով լցւած իմ հոգին.
հպարտ եմ, որ ես—անհուն մի պօչտ,
ձայնով խնդագին—
խառնում եմ այս նոր, հզօր երգը քո—
բոլորի՛ երգին...

ԴԷՊԻ ԱՊԱԳԱՆ...

Լցւած է անհուն իմ հոգին հիմա
շփոթ երգերով ու աղմուկներով.
լցւած է սիրտը իմ— ելեքտրական
բորբ հոսանքներով:

Ռադիօ—կայան է իմ հոգին հիմա
ամբողջ աշխարհի ու մարդկանց հանդէպ.
ու բարձր է, բարձր է կայանն իմ հոգու—
Մասիսի նման բարձր է ու հաստատ -
հզօր, անարկու:

Օրերում այս վառ, հողմավար, շփոթ—
հեռու ու մօտիկ միլիոն սրտերի
երգն է վիճակել ինձ երգել այսօր.
իմ բաղձամիլիոն, բիւր ընկերների
խինդը այսօրւայ ու թռիչքը մեծ
գալիք օրերին նետէն է երգիս
վիճակել այսօր. .

Ահա թէ ինչու է երգս յաղթական.
ահա թէ ինչու է իմ ձայնը այսօր
յաւերժի նման յամառ ու հաստատ:

Ահա թէ ինչու—
վիթխարահսկա, որպէս էյֆելիան
աշտարակը մեծ—
անցած ու գալիք դարերի շեմքին
հզօր, բարձրաբերձ—
կանգնել եմ ամբողջ հասակովս մէկ
և երգում եմ ես:
Եւ հոգիս հիմա—ռադիօ-կայան—
իր հրակարմիր երգն է ուղարկում

հեռու ու հեռու—

բոլոր սրտերին, որ ապրում են, կան—
բոլոր կողմերում:

Երգում է հոգիս հրեղէն, հնչում:
Գիտեմ՝ այսօրւայ իմ երգի առաջ—
իմ հոգու կարմիր կայծերի հանդէպ—
ռադիօ-կայան է ամեն մի հոգի—
ուր էլ նա լինի.

ամեն մի հոգի, որ ապրում է, կայ
և կրում է իր թևերի վրայ
նայն խորհուրդը մեծ, խորհուրդը հսկա
օրերի այս վառ—

այս վառ օրերի խորհուրդը պայծառ:

Ամեն մի հոգի,

որ իր երկաթէ թևերով այսօր

զնգում է շաչում

և փնտրում է նոր հանգիստ ու օրօր—

միլիոն թևերի ըմբոստ շառաչում. .

Գիտէ՞ք, որ հիմա

այստեղ—Նաիրի իմ երկրում աւեր

ու հեռու—հեռուն—

կարմիր Մոսկովում,

Տիբէթում դեղին,

Սան-Ֆրանցիսկոյում, Լոնդոնում հսկա

ու Սինգապուրում—

բոլոր վայրերում, բոլոր կողմերում

աշխարհը մի նոր երգով է յղի...

Հէյ, հեռու—մօտիկ

հանքահորերում,

գործարաններում,

լայն ստէպներում ու անտառներում—

բոլոր վայրերում, բոլոր կողմերում—

երկաթի, բրոնզի, հողի ու հանքի
երգով օրօրւած իմ բիւր եղբայրներ! —
Ո՛վ ունի այսօր կամքը մեր հրէ,
ուժը մեր բոսոր
ու վառ բախտը մեր —
տիեզերական...

Ո՛վ ունի այսօր...

Մենք ենք, որ նոր ենք, հազար ենք ու բիւր!

Երկաթէ հսկա մի գիսկի նման
բիւր եղբայրների կամքը մեր արի,
տիեզերական —
նեանէլ ենք արդէն թափով վիթխարի
դէպի հողմերը գալիք օրերի,
դէպի — Ապագան...

ԲՐՈՂՁԷ ԹԵՒԵՐԸ ԿԱՐՍԻՐ ԳԱԼԻՔԻ

Շաչում է աշխարհը, զնգում է հիմա:
Շաչում ու զնգում են աշխարհի վրայ
բրոնզէ թևերը կարմիր Դալիքի:

Որպէս երկաթէ մի մրրը՝ ահա՛
թռչում է կարմիր մեր կամքը հիմա
աշխարհի հեռուն —
ու շաչում է յաղթ, երկաթ թևերով
հեռու ու մօտիկ ռազմադաշտերում:

Փողփողում է վառ սրելի առաջ
մեր կամքը հիմա, որպէս վիթխարի
մի կարմիր դրօշ,
որի արնագոյն, կարմրավառ փայլից
հնաւանդ, զազիր քաղաքները քար
ցուլերի նման վիթխարահսկա,
վախից խելագար,
կանգնում են յետին ոտքերի վրայ,
փորում են հողը ոտքերի տակի
ու, սարսափահար,
իրենց վայրենի վախն են մոնչում
աշխարհով մէկ,
վախը վայրենի, որ հնչում է մեր
բոսոր սրտերում, որպէս յաղթութեան
ու փառքի մի երգ:

Օ, բառաչը այդ խելագար վախի,
օ, սարսափահար ճիչը հոգեվար
ու տագնապը սուր —
հին, հազարամեայ, բար քաղաքների
տագնապը զազիր...

Օ, սարսափը այդ յուսահատական,

մեռնող ցուլերի բառաչը վերջին
կրկէսների մէջ հակավիթխարի,—
օ, սարսափը այդ նրանց յուսահատ,
որ մեր սրտերում, կրծքերում երկաթ
փոխում է կարմիր, խնդացող հրի...

Ճշում են հիմա
թերթերը բոլոր մայթերի վրայ,
յաղթ կայանները ուղիօ-գրի,
գոց, զրահապատ գնացքներն շտապ
ու շչակները գործարանների,
սաւառնակների թւերը շաշիդ,
աղմուկը մաշուղ աւտոշինների,
թնդանօթների աճրոխները ծոյ,
որ հիմա արնոտ ուղմաղաշտերից,
Գործադուլ արած բանւորների պէս
տուն են շտապում քայլերով տարտամ—
Ֆանթաստիքական, անել առօրեան
ճշում է հիմա
նրանց անամոր, նրանց հոգեվար
տագնապի մաւին յուսահատական,
ճշում է խոպոտ իր ձայնով վերջին—
ու հասնում է այդ ճիշը յուսահատ
Լո՛ւդոնից Փարիզ—Յէյլոն—Հնդուչին...

Ձգւել են ցանցեր—
երկաթէ անտես ցանցեր ու ցա՛ցեր
աշխարհում անծիր—
սրտից—սիրտ հիմա, քաղաքից—քաղաք—
վառ, կարմիր ցանցեր...

Մեր կամքն է այդպէս հզօր շղթայել
աշխարհը համակ—
մեր կամքը—թռչող, որպէս փոթորիկ,
ու տոկուն, յամառ, որպէս ժամանակ—

Ե՛ս եմ—եղբայրս—ընկերս—օ, ո՛չ
կամքը իմ, կամքը քո—ու էլի, էլի
կամքեր նոյնագօր—հազար ու հազար:
Ու էլի, էլի,
ու էլի, էլի.

զգո՛ւմ ես—հոգիս, հոգիդ ու նրա—
հեռու, անծանօթ ընկերոջ հողին—
նոյն արեգնական խորհրդով է լի...
Ու էլի, էլի,
ու էլի, էլի,—
ամեն տեղ հիմա, բոլոր կողմերում—
Մոսկովից—Փարիզ, Լոնդոնից—Հոմ...

Մինչև—Հնդուչին...

Թնդանօթների բառաչը վերջին,
Տանկերը արնոտ ուղմաղաշտերում—
կէտերի նման երկաթազրահ...
Գնդացիւրների ծառաւ ազահ—
գործարանների շչակները լուռ...
Սրերը՝ երկաթ ու պղինձ հազած
սաւառնակների նման ուսմբածիգ—
օրերը, որ թէժ ուսմբեր են նետում
և թռչում են—
ո՛ւր. . .

Անծիր դաշտերում—բանակներ կարմիր:
Քաղաքներ մեռնող ու գիւղեր անմարդ:
Օրերի միգում—տագնապ ու զրգիւ:
Ոսկի ու բոռնցք, արիւն ու երկաթ:
Ու տագնապը մութ, անուշտ ու ազահ,
հրէշի նման գեղին, հազարաչ,—
ու բաղամբրիկ աշխարհի վրայ—
բրոնզէ կարմիր թւերի շառաչ...

Ու երգը իմ նոր պիտի աւետի
վաղը աշխարհին առաջին անգամ
թռչիք մասին անկուշտ կարօտի
մեր յաւերժական...

Եւ նրանք, որ դեռ աշխարհում չըկան,
որ դեռ նոր պիտի ապրեն աշխարհում,
դեռ նոր պիտի գան—
կարող են՝ թող մեր թռիչքն այսօրւայ
անձկօրէն չըզգան...
Նրանք, որ պիտի ապրեն աշխարհում
կարմիր Ապագան...

Նրանք, որ դեռ նոր, դեռ նոր պիտի գան...

920, 3 - 6. Երևան



~~33923.~~
19692

ՄՄ Հայագիտական գրադարան



MAL018086

ԼՈՅՍ ԵՆ ՏԵՍԵԼ ՇԵՂԻՆԱԿԻ՝

„Երկը երգ” Կարս, 914 թ. սպառուած
„Կապուտաշեայ Հայրենիք” Թիֆլիս, 915 թ. սպառուած
„Դանթէական առասպել”, Թիֆլիս, 916 թ. սպառուած
„Ծիածանը”, լիբիկա Մոսկւա, 917 թ. սպառուած.
„Սոմա”, նոր վեդեան պօէմ, Թիֆլիս, 918 թ.
„Ամբոխները խելագարւած”, Թիֆլիս, 919 թ.
„Ողջաիզդուող կրակ”, բանաստ. լոյս կը տեսնի Թիֆլիզում

ՊԱՏՐԱՍԵ ԵՆ ՇՐԱՏԱՐԱԿՈՒԹԵԱՆ՝

„Է. Խալէ պրօֆիլը Ձեր”, գալանտ երգեր
„Մարդերգութիւն”, պօէմներ մարդու մասին
„Ազգային երազ”, սատիրական պօէմ.